Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
օգոստոսի 13-ի N 921 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են նորմատիվ իրավական ակտերի նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման առարկան, նպատակն ու ընթացակարգը:

2. Բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատումը նորմատիվ իրավական ակտի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր փոփոխությունների վերլուծությունն է՝ նպատակ ունենալով կանխորոշելու, կանխարգելելու կամ նվազագույնի հասցնելու տվյալ իրավական ակտի կիրառման դեպքում շրջակա միջավայրի վրա դրա բացասական ազդեցությունը:

3. Բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատումը պարտադիր է օրենքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության տարեկան ծրագրով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերի համար:

4. Բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման ընթացքում դիտարկվում է նորմատիվ իրավական ակտի ընդունման արդյունքում դրա ազդեցությունը՝

1) շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, այդ թվում՝ անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների վրա.

2) բնական ռեսուրսների արդյունավետ, համալիր և խելամիտ օգտագործման տեսանկյունից։

5. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված դիտարկումն ըստ շրջակա միջավայրի օբյեկտների կատարվում է բնապահպանական օրենսդրության պահանջների շրջանակներում՝ հետևյալ ուղղություններով՝

1) ազդեցությունը մթնոլորտային օդի վրա.

2) ազդեցությունը ջրային ռեսուրսների որակի և քանակի վրա.

3) ազդեցությունը հողերի որակի վրա.

4) ազդեցությունը կլիմայի վրա.

5) ազդեցությունը կենսաբազմազանության, բուսական և կենդանական աշխարհի ու լանդշաֆտների վրա.

6) թափոնների գոյացումը.

7) ազդեցությունը բնական ռեսուրսների օգտագործման վրա.

8) բնապահպանական ռիսկերի հավանականությունը և աստիճանը.

9) նախատեսվող տնտեսական գործունեության ազդեցությունը։

6. Բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման ընթացքում դիտարկվում է նաև նորմատիվ իրավական ակտի նախագծի համապատասխանությունը բնապահպանության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին, նորմերին, կանոններին և պահանջներին։

7. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը սահմանված ժամկետում (15 օր, իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի համար՝ 5 օր) գնահատում է ազդեցությունը և դրա վերաբերյալ կազմում բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացություն։

8. Բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը ներառում է՝

1) կարգավորման արդյունքները՝ հաշվի առնելով սույն կարգի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով ամրագրված դրույթները.

2) նախատեսվող իրավական ակտի չընդունման դեպքում՝ բնապահպանության բնագավառի վրա ազդեցության գնահատման արդյունքները.

3) այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից կատարված հաշվարկների ու հետազոտությունների հիման վրա առաջարկվում է բնապահպանության բնագավառի կարգավորման առավել բարենպաստ տարբերակ, այդ տարբերակը՝ համապատասխան հիմնավորումներով.

4) այն դեպքում, երբ ներկայացված նորմատիվ իրավական ակտի նախագծով նախատեսվում է մշակել հայեցակարգեր, ծրագրեր, համալիր սխեմաներ, գլխավոր հատակագծեր, տարածքային պլանավորման փաստաթղթեր և պաշարների համալիր օգտագործման սխեմաներ, եզրակացությունը ներառում է տվյալ իրավական ակտի նախագծի՝ բնապահպանական պետական փորձաքննության ենթակա լինելու պահանջը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

5) նորմատիվ իրավական ակտի կիրարկման արդյունքում կանխատեսվող հետևանքները գնահատելու ժամանակացույցը.

6) բնապահպանության բնագավառում վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծությունները՝ սույն կարգի 6-րդ կետին համապատասխան։

9. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի և սույն կարգի պահանջներին համապատասխան տրված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցու-

թյան գնահատման մասին եզրակացությամբ ամրագրված առաջարկություններն ու պահանջ-

ները հաշվի են առնվում նախագիծը մշակող մարմնի կողմից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ